ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն

29 ապրիլի, 2025 թ.

«Հայոց լեզու և հայ գրականություն. զարգացման միտումները, հանրամատչելիացման հնարավորությունները և դրանց արտացոլումը ուսումնական գործընթացում » համահայկական գիտաժողով

Կազմակերպիչներ՝
ՀՀ ԳԱԱ
ՀՀ ԿԳՄՄՆ
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հարգարժան գործընկեր

Հրավիրում ենք մասնակցելու **«Հայոց լեզու և հայ գրականություն. զարգացման միտումները, հանրամատչելիացման հնարավորությունները և դրանց արտացոլումը ուսումնական գործընթացում » համահայկական գիտաժողովին**, որը տեղի կունենա 2025թ. ապրիլի 29-ին, ՀՀ ԳԱԱ-ում: Գիտաժողովում կքննարկվեն հանրակրթական և բուհական ոլորտներում հայագիտության, մասնավորապես՝ գրականագիտության և լեզվաբանության հանրամատչելիացման և նրանց հիմունքների ուսուցման հիմնախնդիրները: Գիտաժողովի կարգախոսը հետևյալն է՝ **«Հայոց լեզուն ՀՀ-ում գիտության հանրամատչելիացման հիմնական լեզուն է»** : Գիտաժողովին, ըստ ներկայացված պայմանների ու պահանջների, կարող են մասնակցել ուսուցիչներ, դասախոսներ, գիտաշխատողներ, քոլեջների աշխատակիցներ, նշված խնդիրներով զբաղվող մագիստրոսներ, ասպիրանտներ և կրթության ոլորտի մասնագետներ: Հասցեն՝ Երևան, Բաղրամյան 24, ՀՀ ԳԱԱ:

Նախատեսվում է քննարկել հետևյալ թեմաները.

- Գրականագիտության հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ
- Լեզվաբանության հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ
- Հայագիտական առարկաների դասավանդման գործնական ուղղվածության ապահովման ուղիները
- Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կրթական համակարգում
- Օլիմպիադաներ և աշխատանք օժտված երեխաների հետ
- Գիտամեթոդական և գիտահանրամատչելի գրականության դերը արդիականացվող կրթական համակարգում:

Տեղեկատվություն.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կայք (https://escs.am/am), ՀՀ ԳԱԱ կայք (https://www.sci.am/), «Գիտություն» թերթ:

Լրացուցիչ տեղեկատվության համար զանգել՝ 097 241130 :

Զեկուցումների և թեզիսների ներկայացման կարգը

Գիտաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ ներկայացնել հոդվածի էլեկտրոնային օրինակը: Գիտաժողովին մասնակցել ցանկացողները կազմկոմիտե պետք է ներկայացնեն հետևյալ նյութերը.

· մասնակցության հայտ

· ելույթի կամ զեկուցման թեզիսները էլեկտրոնային և տպագիր օրինակով՝ մինչև 5 տպագիր էջ ծավալով, Word document ձևաչափով:

· Ներկայացման վերջնաժամկետը 2025թ. ապրիլի 15-ն է:

· Զեկուցումները և թեզիսները ուղարկել anna.mirzoyan@sci.am էլ. հասցեին:

Հոդվածի ներկայացման չափանիշները

Հոդվածն ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ կից (File Attachment)՝ anna.mirzoyan@sci.am

● **Համակարգը**՝ Microsoft Word, A4 չափի. հոդվածը՝ առավելագույնը 5 էջ. ամփոփումը՝ կես էջ (ներառյալ հեղինակի ազգանունը, անունը, խորագիրը), լուսանցքը՝ բոլոր կողմերից 2.5, պարբերության առաջին տողի խորությունը՝ 1. 25:

- **Լեզուն՝** հայերեն (ամփոփումը՝ անգլերեն և ռուսերեն), անգլերեն, ռուսերեն (ամփոփումը՝ հայերեն):
- **Տեքստի տառատեսակը՝** Sylfaen (հայերեն), Times New Roman (անգլերեն, ռուսերեն), ամփոփման տառատեսակը՝ Sylfaen (հայերեն), Times New Roman (անգլերեն, ռուսերեն):
- **Հերթականությունը՝** ա) հեղինակի ազգանուն, անուն, փակագծերում՝ երկիր և աշխատավայր, բ) խորագիր, գ) բանալի բառեր (7 բառ), դ) տեքստ, ե) ամփոփում և տեղեկություններ հեղինակի մասին (հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը):
- **Հոդվածի վերջում գրականության և համառոտագրությունների ցանկեր չկցել:**

- Տեքստում չպետք է լինեն կրկնակի բացատներ և տողադարձեր:

- **Հղումները՝** տողատակում, հերթական համարակալմամբ:
- **Տառերի չափը**. հեղինակի ազգանուն, անուն՝ 12 մուգ, երկիր, աշխատավայր՝ 12 ոչ մուգ, խորագիր՝ 12 մուգ, գլխատառ,ենթախորագրեր՝ 12 մուգ, տեքստ՝ 12 ոչ մուգ, ամփոփում՝ 12 ոչ մուգ (ամբողջությամբ), հղումներ՝ 10 մուգ (հեղինակ), 10 ոչ մուգ, թեք (խորագիր), 10 ոչ մուգ (մատենագրական տվյալներ.):
- **Փակագծերը՝** կլոր:
- **Տողերի միջև հեռավորությունը՝** 1.5:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Հայոց լեզու և հայ գրականություն. զարգացման միտումները, հանրամատչելիացման հնարավորությունները և դրանց արտացոլումը ուսումնական գործընթացում »
համահայկական գիտաժողով
29 ապրիլի 2025 թ

Մասնակցության հայտ

Անուն, ազգանուն, հայրանուն ----------

Գիտական աստիճանը, կոչումը ----------

Աշխատանքի վայրը, պաշտոնը ----------

Աշխատավայրի հասցեն ----------

Հեռախոս ---------- էլ.փոստ ----------

Ներկայացնելու եմ զեկուցում

այո ոչ

Մասնակցելու եմ հյուրի կարգավիճակով

այո ոչ

Զեկուցման թեման ----------

Զեկուցման համար անհրաժեշտ են տեխնիկական միջոցներ (համակարգիչ, պրոյեկտոր, և այլն)

այո ոչ

Ստորագրություն ----------

Ամիս, ամսաթիվ ----------